

h-85

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՀԱՄԼԵՏԻ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԵՊ
(1990-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Է 00.02. «Ընդհանուր պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂԱԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2001

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ
ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝

Վ. Ա. Բայբուրդյան

Պատմական գիտությունների թեկնածու՝

Ռ.Կ. Կարապետյան


Առաջատար կազմակերպություն՝
Խ. Աթոյանի անվան Հայկական Պետական
Մանկավարժական Համալսարանի ընդհանուր
պատմության ամբիոն:

Պաշտպանությունը կայանալու է 2001թ. մայիսի 3-ին, ժամը 14-ին, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի 006 մասնագիտական խորհրդում (Հասցեն՝ 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյանի պող., 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2001թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական, խորհրդի գիտական քարտուղար՝


Ռ. Ա. Մաֆրաստյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հակամարտությունների լուծումը այսօր համարվում է համաշխարհային հանրության առջև
ծառայած գերխնդիրներից մեկը, որոնց լուծման ուղիների շուրջ առաջացած
տարածայնությունները և քաղաքական ակտիվությունը կարելի է համարել համոզիչ
փաստարկ հօգուտ այն բանի, որ հակամարտությունները ոչ միայն տարաբնույթ են և
բազմակողմանի, այլև շոշափում են բազմաթիվ պետությունների շահերը:

Դեռ հին աշխարհի պատմագիրները Պաղեստինը անվանել են աշխարհի ճանապարհների
խաչմերուկ: Կարծում ենք այդ բնորոշումը կարելի է վերագրել ոչ միայն Պաղեստինին, այլև
ամբողջ Մերձավոր Արևելքին, որը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի իր վրա գրավել է և
այսօր էլ գրավում է աշխարհի ուժեղների ուշադրությունը, որոնք մշտապես ցանկացել են,
եթե ոչ անմիջականորեն իշխել, ապա գոնե իրենց ազդեցության ոլորտում պահել այս
տարածաշրջանը:

Այն ֆոնի վրա է զարգանում Պաղեստինում ապրող երկու ժողովուրդների հրեաների և
արաբների տասնամյակներ տևած և մինչև օրս վերջնականորեն լուծում չգտած
հակամարտությունը: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած
պարտությունից հետո և՛ արաբները և՛ հրեաները հույս ունեին Պաղեստինում ստեղծել իրենց
անկախ պետությունը: Հրեաները իրենց հույսը կապել էին 1917 թվականի Բալֆուրի
հռչակագրի հետ, որով խոստացվում էր Պաղեստինում հրեաների համար ստեղծել ազգային
օջախ, իսկ արաբները՝ Մեքքայի շերիֆ Հուսեյնի և անգլիական զորքերի հրամանատար
Հենրի Մակմահոնի միջև 1915թ. հոկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի հետ, ըստ որի
Անգլիան պարտավորվում էր աջակցել արաբական ապստամբությանը թուրքական
տիրապետության դեմ և պատերազմից հետո ճանաչել արաբական անկախ
թագավորությունը, իսկ Պաղեստինը մտնում էր այն տարածքների մեջ, որոնք պայմանագրի
համաձայն պետք է անկախություն ստանային: Սակայն դա չխանգարեց, որ Անգլիայի
ներկայացուցիչ Մարք Սայքսը և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոն 1916թ. մայիսին
կնքեն մեկ այլ գաղտնի համաձայնագիր: Ըստ Սայքս-Պիկո համաձայնագրի առաջին
համաշխարհային պատերազմի ավարտից հետո Անգլիայի տիրապետության տակ էին
անցնելու Իրաքը և Պաղեստինը, իսկ Ֆրանսիայի՝ Սիրիան և Լիբանանը: Սակայն 1920թ.
Պաղեստինում հաստատվեց Մեծ Բրիտանիայի մանդատը, որը ոչ միայն չլուծեց հարցը, այլ
ի վերջո հանգեցրեց Պաղեստինի բաժանմանը հրեաների և արաբների միջև ՄԱԿ-ի Գլխավոր
Ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումով, վերջիններս էլ արաբա-իսրայելական
պատերազմների պատճառով զրկվեցին իրենց հատկացված տարածքներից:

1948-49 թվականների արաբա-իսրայելական պատերազմից և Պաղեստինից արաբների մի
մասի վտարումից հետո, հակամարտությունը ավելի խորացավ, իսկ 1967 և 1973

թվականների արաբա-խորայելական պատերազմներից հետո խորայելա-պաղեստինյան հակամարտությունը վերածվեց տարածաշրջանային հակամարտության՝ իր վրա սևեռելով միջազգային կազմակերպությունների, համաշխարհային հասարակության և համաշխարհային գերտերությունների ուշադրությունը, որոնք հակամարտության լուծման ուղիները սկսեցին կապել տարածաշրջանում իրենց մարտավարական և ռազմավարական շահերի ապահովման և այստեղ իրենց ազդեցության հաստատման հետ: Նման առանձնահատուկ ուշադրությունը հարցի նկատմամբ բացատրվում է նրանով, որ հակամարտությունը շարունակում է որոշիչ լինել ռազմավարական առումով բացառիկ նշանակություն ունեցող տարածաշրջանի քաղաքական կյանքում և լուրջ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի անվտանգությանն ու խաղաղությանը:

20-րդ դարի այս թնջուկի առաջացումը և զարգացումը շատ բաներով որոշում է ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության բնույթը: Տարածաշրջանում առաջացած և առաջացող ճգնաժամերը այս կամ այն կերպ

առնչվում էին պաղեստինյան պրոբլեմի հետ: ԵՎ արդեն հինգ տասնամյակից ավել Մերձավոր Արևելքը ամերիկյան քաղաքական գործիչների կողմից որակվում է որպես «ԱՄՆ-ի կենսական շահերի ու հետաքրքրությունների» ոլորտ և ժամանակ առ ժամանակ հայտնվում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության էպիկենտրոնում: ԱՄՆ-ի հետաքրքրությունները մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ կապված են նախ և առաջ վերջինիս աշխարհագրական դիրքի և նավթային հարստությունների հետ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը, որպես Անգլիայի դաշնակից, այս կամ այն կերպ առնչվում էր Մերձավոր Արևելքում տեղի ունեցող գործընթացներին և նկատվում էր արդեն միտում միջամտելու տեղի գործընթացներին: Այսպես 1918 թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ը միացավ Բալֆուրի հռչակագրին, իսկ 1922թ. ԱՄՆ-ի կոնգրեսը հայտարարեց, որ հավանություն է տալիս Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու ծրագրին: Երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած ԱՄՆ-ի դրությունը Մերձավոր Արևելքում փոխվեց: ԱՄՆ-ի տնտեսական և ռազմավարական շահերը տարածաշրջանում ձեռք բերեցին արտակարգ կարևորություն: Մերձավորարևելյան քաղաքականությունը ԱՄՆ-ի համար դարձավ հրամայական անհրաժեշտություն: Դրա հետ միաժամանակ նկատվում էր Մերձավոր Արևելքի զավթումը ֆաշիստների կողմից կանխելու և ի հաշիվ Անգլիայի և ֆրանսիայի սեփական դիրքերը տարածաշրջանում ուժեղացնելու միտում: Վերջիններիս հետ մրցակցությունը շարունակվեց մինչև 1956 թվականը, երբ Եգիպտոսի դեմ ձեռնարկած ագրեսիայից հետո Անգլիան և Ֆրանսիան կորցրին իրենց ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Այս պահից սկսած կարելի է խոսել ԱՄՆ-ի անմիջական միջամտության մասին մերձավորարևելյան գործընթացներին:

Ընդհուպ մինչև 1990-ական թվականների սկիզբը, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության համար կարևորվում էին երկու գործոններ: Առաջինը, ԽՍՀՄ-ի հետ մրցակցությունն էր և Սառը պատերազմը: Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ-ի ազդեցության ուժեղացումը կանխելու համար ԱՄՆ-ը ակտիվորեն նախածեռնում և ոգեշնչում էր ռազմական դաշինքների կազմավորում Մերձավոր Արևելքում (միջինարևելյան հրամանատարություն, Բաղդադի պակտ, ՍԵՆՏՕ, և այլն): Ունենալով հսկայական ֆինանսա-տնտեսական պոտենցիալ, ԱՄՆ-ը, այնուամենայնիվ, իրականացնելով իր մերձավորարևելյան քաղաքականությունը՝ մինչև 1990-ական թվականների սկիզբը հաշվի էր առնում նաև ԽՍՀՄ-ի ազդեցության առկայությունը տարածաշրջանում:

Երկրորդ գործոնը արաբա-խորայելական հակամարտությունն է: Այս հարցում, ընդհուպ մինչև 2. Բուշի նախագահության տարիները, 1988-1992թթ, ԱՄՆ-ը զբաղեցնում էր զուտ պրոխորայելական կողմնորոշում: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության նոր փուլի համար, որը սկսվում է 90-ական թվականներից, բնորոշ են ուժային քաղաքականության մեթոդները: Այս փուլում ԱՄՆ-ը իր հետաքրքրությունները տարածաշրջանում ապահովելու հարցում սկսում է գործել պրակտիկ մեթոդների ընտրության լրիվ ազատության պայմաններում, որի վառ ապացույցն է Պարսից Ծոցի պատերազմը 1991թ.: Այս պահից սկսած ԱՄՆ-ը արձագանքում է Մերձավոր Արևելքում ընթացող գործընթացներին՝ ելնելով բացառապես սեփական շահերից: Բացի այդ, ներկայումս գնալով ամրապնդվում է ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը Մերձավոր Արևելքում, որի հիմքը դրվելով դեռևս 1980-88 թվականների իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, աճեց 1991թ. Քուվեյթյան ճգնաժամի ընթացքում և վերջնական հաստատումը գտավ 1997թ. իրաքյան ճգնաժամի ժամանակ: Փոփոխություններ կան նաև ԱՄՆ-ի ռազմական դոկտրինայում: Եթե նախկինում ԱՄՆ-ը խուսափում էին անմիջականորեն ռազմական ուժի գործադրումից, ապա այժմ ԱՄՆ-ը իրենց թույլ են տալիս ռազմական միջամտություն, եթե Մերձավոր Արևելքում որևէ իրադարձություն կամ գործընթաց սպառնում է ԱՄՆ-ի շահերին:

Միաժամանակ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության նոր փուլի համար բնորոշ է նաև արաբա-խորայելական հակամարտության հանդեպ համեմատաբար հավասարակշռված քաղաքականություն վարելը:

Փաստորեն ԽՍՀՄ-ի փլուզումը և խորայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի կողմից, 1990-ական թթ. սկսած, հավասարակշռված քաղաքականություն վարելը, առաջ են քաշում մի շարք բոլորովին նոր հարցադրումներ, որոնք կարիք ունեն համակողմանի ուսումնասիրության և իրենց բնույթով խիստ արդիական են: Մասնավորապես Մերձավոր Արևելքում այսօր ընթացող զարգացումների ֆոնի վրա խիստ արդիական հնչեղություն են ստանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Պաղեստինյան պետության ստեղծման, Երուսաղեմի ապագային և պաղեստինյան փախստականների վերադարձին վերաբերվող հարցերը: Իսկ վերոհիշյալ բոլոր հարցերը ամրագրված են 1993թ. Օսլոյի,

1995թ. Վաշինգտոնյան և 1998թ. Ռեյ-Փլանթեյշնի համաձայնագրերում, որոնց ուսումնասիրությունը սույն ատենախոսության գլխավոր խնդիրներից մեկն է: Այսօր ՊԱԿ-ի կանոնադրությունից հանված է Իսրայելը, որպես պետություն վերացնելու կետը, իսկ Իսրայելը ճանաչել է ՊԱԿ-ի քաղաքական իրավունքները: Սրանք հարցեր էին, որոնք բավականին տևական ժամանակ խանգարում էին կողմերին երկխոսություն սկսել հակամարտության կարգավորման շուրջ:

Բացի այդ, տասնամյակներով արաբա-իսրայելական հակամարտությանը առնչվելու հանգամանքը ԱՄՆ-ին թույլ են տալիս ծանոթ լինելու հակամարտության ամենաեական կողմերին և փաստորեն հանդես գալու միակ արդյունավետ միջնորդի դերում: Արդիական է հնչում նաև այս հարցադրումը, քանզի 1990-ական թվականներից սկսած՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումը կապվում է բացառապես ԱՄՆ-ի միջնորդության հետ և քանի որ Մերձավոր Արևելքում ցանկացած գործընթաց միշտ էլ կապված է եղել իսրայելա-պաղեստինյան հակամարտության հետ, ապա այժմ, բնականաբար, մերձավորարևելյան ցանկացած գործընթաց այս կամ այն կերպ առնչվելու է ԱՄՆ-ի հետ, այնինչ նախկինում այդ գործընթացները կապված էին ոչ միայն ԱՄՆ-ի հետ:

Վերջին հաշվով Սառը պատերազմի ավարտը, ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ը դարձել են արաբա-իսրայելական հակամարտության շահագրգիռ երրորդ կողմը: Այդ աննախադեպ շահագրգռվածության պատճառներից մեկն այն է, որ ԱՄՆ-ը ձգտում են առավելագույնս ապահովել իրենց դաշնակցի՝ Իսրայելի անվտանգությունը և հակամարտության կարգավորման շնորհիվ ամբողջապես իրենց ազդեցության տակ գցել արաբական պետություններին, ինչը իր հերթին հնարավորություն կընձեռնի ապահովել մերձավորարևելյան նավթի վրա հսկողությունը և անխափան մատակարարումը արևմուտք: Այդ իսկ պատճառով արաբա-իսրայելական հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունը ուղղված է եղել նրան, որ ապահովվի այդ հակամարտության լուծման փուլային և սեպարատ մեթոդի գերակայությունը: Փուլային լուծման արդյունքներ են Քեմփ-Ղևիդի, Օսլո-1, իսրայելա-հորդանանյան, Ռեյ-Փլանթեյշնի համաձայնագրերը:

Իսկ հաշվի առնելով Մերձավոր Արևելքի, որպես աշխարհագրական առումով խիստ կարևոր տարածաշրջանի և համաշխարհային քաղաքականության մեջ որպես բավականին ազդեցիկ գործոնի նշանակությունը և կապելով այս հանգամանքները վերոհիշյալ հարցադրումների հետ՝ կարելի է ասել, որ թեմայի ընտրությունը այս տեսանկյունից դառնում է խիստ արդիական: Թեմայի արդիականությունը կապված է նաև ներկայումս ընթացող ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մի քանի հիմնական ուղղությունների հետ, որոնք են՝

- ❖ Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորում;
- ❖ Իսրայելի և Սիրիայի / նաև Լիբանան / միջև խաղաղության համաձայնագրի կնքում;
- ❖ Իսրայելի անվտանգության ապահովում;

- ❖ Սեփական տնտեսական դիրքերի ապահովում Պարսից ծոցի շրջանում;
- ❖ Ավելի սերտ կապերի հաստատում արաբական վարչակարգերի հետ;
- ❖ Ուղղակի ներկայության ուժեղացում տարածաշրջանում՝ Իրաքի և Իրանի կողմից տարածաշրջանի երկրներին « սպառնացող վտանգի » կանխման հիմնավորումով;
- ❖ Իրանի ազդեցության չեզոքացում:

2. ԱՆԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Հիմնական նպատակը—վերլուծել ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ 1990-ական թվականներին:

- ❖ Բացահայտել նրա նոր մոտեցումները և կարևոր դերը այդ հակամարտության լուծման գործում արդի ժամանակաշրջանում:
- ❖ Ցույց տալ իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության փուլերի ընդհանրություններն ու տարբերությունները:
- ❖ Ցույց տալ այն հեռանկարները, որոնք կարող են բացվել ԱՄՆ-ի առջև իսրայելա-պաղեստինյան հակամարտության լուծման շնորհիվ:

3. ՄԵԹՈՂԱԿԱՆ ԴԻՄՔԸ:

Ռեսուրսների մեթոդական հիմքը կազմում են պատմահամեմատական մոտեցումը և հիմնահարցերի աղբյուրագիտական վերլուծությունը: Հեղինակը լայնորեն օգտագործել է տարբեր տեսակետների և խնդիրների լուծման նկատմամբ տարբեր մոտեցումների համադրումը՝ հենվելով սկզբնաղբյուրների և տարբեր լեզուներով հրատարակված մասնագիտական գրականության տվյալների վրա:

4. ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Ատենախոսության թեման այս կտրվածքով առաջին անգամ է դառնում ուսումնասիրության առարկա: Նրանում համակողմանիորեն վերլուծության են ենթարկվում 1990-ական թվականներին կնքված արաբա-իսրայելական համաձայնագրերը, մասնավորապես 1993թ. Օսլոյի, 1995թ. Վաշինգտոնյան և 1998թ. Ռեյ-Փլանթեյշնի համաձայնագրերը, և բացահայտվում դրանց կնքման գործում ԱՄՆ-ի կատարած դերը: Թեմայի գիտական նորույթը կայանում է նաև նրանում, որ առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դառնում Պաղեստինյան անկախ պետության ստեղծման, Պաղեստինյան Ազգային և Գործադիր Խորհուրդների առաջացման, Իսրայելի և ՊԱԿ-ի կողմից քաղաքական երկխոսություն սկսելու (այդ թվում՝ ՊԱԿ-ի կանոնադրությունից Իսրայելը վերացնելու կետի հանումը), միմյանց քաղաքական իրավունքները ճանաչելու և Իսրայելի կողմից ՊԱԿ-ին տարածքներ

հանձնելու հարցերը: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև ինթիֆադան՝ (պաղեստինցի արաբների բարձրացրած ապստամբությունը Իսրայելի դեմ) և 1990-ականներին մեծ ծավալ ստացած ահաբեկչության հետ կապված հարցերը: Թեմայի գիտական նորույթը կայանում է նաև նրանում, որ վերոհիշյալ բոլոր հարցերը ներկայացվում են ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հետ խիստ շղկապված: Թեման կարևոր է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե քաղաքական, և թե գիտական առումներով: Դա պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրվող պրոբլեմը մի կողմից առնչվում է ամենափին հակամարտություններից մեկի՝ արաբա-իսրայելականի լուծման նոր ուղիների որոնման, իսկ մյուս կողմից՝ այսօր աշխարհի միակ գերտերության՝ ԱՄՆ-ի քաղաքականության հետ մի տարածաշրջանում, որին աշխարհագրական առումով պատկանում է նաև Հայաստանը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:

Աշխատանքի նյութերը և տվյալները կարող են օգտագործվել 20-րդ դարի երկրորդ կեսում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության, և Մերձավոր Արևելքի երկրների պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում: Աշխատության եզրահանգումները օգտակար կարող են լինել պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշ հարցեր մշակելու տեսանկյունից:

6. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի Արաբական երկրների բաժնում և Գյումրիի Մանկավարժական Ինստիտուտի Պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են ատենախոսի կողմից «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի 19-րդ հատորում հրատարակված հեղինակի «Օսլո 2-րդ համաձայնագիրը որպես Պաղեստինյան հակամարտության կարգավորման հերթական քայլ» հոդվածում, Երևանի պետական համալսարանի 80-ամյակին նվիրված գիտաժողովի լույս ընծայած հոդվածաշարում տպագրված «ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վրա ազդող որոշ գործոնների մասին» հոդվածում և Երիտասարդ Արևելագետների հանրապետական 20 և 21-րդ գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցումներում և հրապարակած թեզերում:

7. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Աշխատությունն ընդգրկում է 1990թ. մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Նման պարբերացումը բացատրվում է նրանով, որ այս ժամանակահատվածում իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ հանդես են գալիս նոր մտեցումներ, որոնք պահպանվում են մինչ օրս: Բացի այդ թեմայի ժամանակագրական շրջանակները առնչվում են արաբա-իսրայելական մի շարք կարևոր համաձայնագրերի կնքման՝ (1993թ. Օսլո-1, 1994թ. Իսրայել-հորդանանյան, 1995թ. Օսլո-2, 1998թ. Ույա-Փլանթեյշնի, 1999թ. Շարմ էլ-Շեյխի) և պատմական մի շարք կարևոր իրադարձությունների՝ (Պաղեստինի անկախության հռչակագրի ընդունում, Պաղեստինյան ինքնավարության ձևավորում, Պաղեստինյան տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծում) հետ:

8. ՍԿՋԲՆԱԴՔՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

Սկզբնաղբյուրներ ---- Համեմատական և աղբյուրագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի, ԱՄՆ-ի Կոնգրեսի, Պետքարտուղարության, ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի, Լոնդոնի Ստրատեգիական Հետազոտությունների Ինստիտուտի, Բեյրութի Պաղեստինագիտության Ինստիտուտի, ԱՄՆ-ի Հասարակական-քաղաքական նախաձեռնությունների Ինստիտուտի արխիվների տվյալները և փաստաթղթերը, որոնց օգտագործումը իրականացվել է ինթերնետ համաշխարհային տեղեկատվական ցանցի միջոցով:

Աշխատության առաջին գլխի համար կարևոր են եղել հետևյալ սկզբնաղբյուրները՝ Պաղեստինի Մանդատը , Պաղեստինի բաժանման ծրագիրը , 1949թ. արաբա-իսրայելական պայմանագրերը , 1967թ. արաբա-իսրայելական պատերազմի մասնակիցներից վերցված հարցազրույցները , Քեմփ-Դևիդի համաձայնագիրը , ՄԱԿ-ի բանաձևերը , Պաղեստինյան Ազգային Խորհրդի Կանոնադրությունը: Այս շրջանի համար կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում նաև Խորհրդային Միության Արտաքին գործերի մինիստրության հրատարակած « ԽՍՀՄ-ը և արաբական երկրները » նյութերի և փաստաթղթերի ժողովածուն:

Աշխատության երկրորդ և երրորդ գլուխների համար կարևոր են հետևյալ սկզբնաղբյուրները՝ Պաղեստինի անկախության հռչակագիրը , 1993թ. Օսլոյի համաձայնագիրը , Ղազա-Երիքովի համաձայնագիրը , 1994թ. պայմանագիրը իսրայելա-պաղեստինյան տնտեսական հարաբերությունների մասին , 1995թ. վաշինգտոնյան , 1997թ. Հեբրոնի , 1998թ. Ույա Փլանթեյշնի , ՊԱԿ-ին՝ Հորդանան գետի արևմտյան ափում և Ղազայի հատվածում իշխանության փոխանցման մասին համաձայնագրերը:

ՈՒՏՈՒՆՆԱՍԻՐՎՈՂ ՔԵՆՃԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ մեծ փաստական նյութ են պարունակում այնպիսի ազդեցիկ պարբերականներ, ինչպես «Թայմս»-ը, «Ինդեփենդենթ»-ը, «Էկոնոմիստ»-ը, «Նյուզուիկ»-ը, «Նյու-Յորք Թայմս»-ը, «Գարդիան»-ը, «Իզվեստիան»:

Որպես աղբյուրներ օգտագործվել են նաև ԱՄՆ-ի նախագահների հուշագրությունները, նամակները, իրադարձությունների ականատեսների օրագրերը:

Գրականությունը-----

Արդեն հինգ տասնամյակից ավելի մերձավորարևելյան հակամարտությունը գտնվում է պատմաբանների, միջազգայնագետների և համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում: Հարցին նվիրվել են բազմաթիվ միջազգային խորհրդաժողովներ ու նստաշրջաններ ՄԱԿ-ի, Արաբական Լիգայի, Եվրոխորհրդի և այլ կազմակերպությունների շրջանակներում: Այս հակամարտության տարբեր հարցերի ու կողմերի լուսաբանմանը նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և աշխատություններ: Այդ առումով օգտագործված մասնագիտական գրականությունը կարելի է բաժանել երեք մասի՝ հայկական, ռուսական/ խորհրդային / և արտասահմանյան:

Հարցի ուսումնասիրման գործում հատկապես մեծ ներդրում ունեն հայ արևելագետները, որոնց աշխատություններում ուսումնասիրության առարկա են դարձել մերձավորարևելյան գործընթացների առանցքային հարցերը:

Այս առումով մեծ կարևորություն է ներկայացնում Ն. Հովհաննիսյանի «Արաբական Արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» ուսումնասիրությունը, որտեղ հայկական արևելագիտության մեջ առաջին անգամ հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, այսինքն քաղաքական իրադարձություններով հագեցված մի ժամանակահատվածում, որի ընթացքում արդեն նկատվում էր որոշակի վերաբերմունք ԱՄՆ-ի կողմից Պաղեստինյան հարցի նկատմամբ: Նույն հեղինակի մեկ այլ մենագրությունում ներկայացված են ոչ միայն ԱՄՆ-ի, այլև մյուս արևմտյան պետությունների մերձավորարևելյան քաղաքականությունը վերոհիշյալ ժամանակահատվածում:

Ս. Ավանեսովի աշխատությունում հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել ԱՄՆ-ի կողմից Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական դաշինքներ ստեղծելու հարցը, որը անուղղակի կապ ունի ուսումնասիրվող խնդրի հետ:

Իսրայել-պաղեստինյան հակամարտության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այդ հակամարտության մեջ ներքաշված են նաև գրեթե բոլոր արաբական երկրները: Այս առումով կարևոր է նաև վերջիններիս դիրքորոշումը հակամարտության նկատմամբ: Այս հարցը նույնպես դարձել է ուսումնասիրության առարկա հայ արևելագիտության մեջ: Ն. Հովհաննիսյանի կողմից ուսումնասիրվել է Իրաքի դիրքորոշումը, Հ. Գրիգորյանի և Ռ. Կարապետյանի կողմից Սիրիայի, Ե. Կարամանուկյանի կողմից Արաբական Լիգայի դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության նկատմամբ:

1956թ. իրադարձություններին և պաղեստինյան հարցի նկատմամբ արաբական ամենաազդեցիկ երկրներից մեկի՝ Եգիպտոսի դիրքորոշմանն են նվիրված Ե. Աբգարյանի ուսումնասիրությունները:

Իսրայել-պաղեստինյան հակամարտության կողմերից մեկի՝ պաղեստինցիների շահերը պաշտպանող ամենաազդեցիկ կազմակերպության՝ Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունի Ա. Թոփալյանը:

Հայ արևելագետներից հարցին անրադարձել են նաև Հ. Շահիրյանը, Ա. Մոջորյանը: Ներկայացվող խնդիրը եղել և մնում է նաև ռուսական պատմաբանների և արևելագետների կողմից ամենաշատ ուշադրության արժանացած հարցերից մեկը: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 1970-80-ական թվականներին, հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել ակադեմիկոս Ե. Պրիմակովի կողմից:

Ա. Գրոմիկոյի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը» աշխատության մեջ ներկայացված է ավելի վաղ շրջան՝ 1960-70-ական թվականները: Գրեթե նույն ժամանակահատվածն է ընդգրկում Ռ. Օվինիկովի աշխատությունը, որտեղ ներկայացվում է պաղեստինյան հակամարտության նկատմամբ ամերիկյան 4 վարչկարգերի՝ Նիքսոնից մինչև Ռեյգան, դիրքորոշումը:

Քաղաքական և ազգամիջյան հակամարտություններին, այդ թվում նաև իսրայել-պաղեստինյան, անրադարձել է Վ. Կրեմենյուկը: Հեղինակը փորձում է ուսումնասիրել ԱՄՆ-ի քաղաքականությունը հակամարտությունների ծագման հանդեպ:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեթոդներին և ռազմական դոկտրինաների ուսումնասիրությանն է նվիրված Յու. Մելնիկովի և Ա. Կոկոշինի աշխատությունները:

Ռուս պատմաբանները անրադարձել են նաև Իսրայելի կազմավորման և վերջինիս արտաքին քաղաքականության հարցերին: Ի. Զվյագելսկայայի աշխատությունում ներկայացվում է իսրայելական բանակի կազմավորման ընթացքը, վերջինիս բարձրագույն հրամանատարության ղեկը քաղաքական բնույթի կարևոր որոշումների ընդունման հարցում:

Իսրայելի պատմությանը և պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությանը ավելի հանգամանորեն է անրադառնում Գ. Նիկիտինան, որը փորձել է վերոհիշյալ երկու հարցերը ներկայացնել սերտորեն շաղկապված: Ռուս պատմաբաններից

ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությանը և պաղեստինյան հակամարտությանը անրադարձել են նաև Օ. Տուգանովան, Ի. Սամիլովսկին, Ե. Դմիտրիևը վերջինիս աշխատությունը հատկապես մանրամասնորեն է անրադառնում պաղեստինյան հակամարտության առաջացմանը և ընթացքին, պաղեստինցի արաբների ճակատագրին:

Ռեսուսանսիբոլդ հարցը, ինչպես արդեն նշվեց վերևում, հետազոտության առարկա է դարձել նաև արտասահմանյան պատմաբանների և միջազգայնագետների կողմից: Պրոֆեսոր Վ. Խալիդիի խմբագրությամբ Բեյրութում 1971 թվականին լույս է տեսել հոդվածների ժողովածու , որտեղ ուսումնասիրության առարկա են դարձել պաղեստինյան հակամարտության առաջացման պատճառները, 1948-49 թվականների արաբա-իսրայելական պատերազմը և ԱՄՆ-ի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ այս շրջանում: Այս կապակցությամբ հատկապես կարելի է հիշատակել Կ. Ռուզվելտի , ՄԱԿ-ում Պակիստանի ներկայացուցիչ Ջաֆրուլա Խանի, Գորդանանում արաբական լեզոնի շտաբի պետ Ջոն Բագուս Գլաբի, ՄԱԿ-ում Ֆիլիպինների ներկայացուցիչ Կառլոս Ռոմոլոյի, Ֆրանկ Էմանուելի, Ռուլանդ Վիտոնի աշխատությունները: Դրանք կարևորվում են նրանով, որ դրանց հեղինակները եղել են դեպքերի անմիջական ակնատեսներ և ՄԱԿ-ի պաղեստինյան հարցերով հանձնաժողովի անդամներ՝ ինչը նրանց թույլ է տալիս առավել հավաստի տեղեկություններ հաղորդել պաղեստինյան հակամարտության ծագման և սկզբնական շրջանի վերաբերյալ:

1950-ական թվականների ամերիկա-իսրայելական հարաբերությունների վերլուծությանն է նվիրված Աբու Ջաբեր Ֆաիզի հոդվածը:

ԱՄՆ-ի՝ 1960-70-ական թվականների մերձավորարևելյան քաղաքականությանը մանրամասնորեն վերլուծության է ենթարկված Վիլյամ Քուանդտի աշխատությունում:

Նույն ժամանակահատվածին անրադարձել է նաև Ջոն Քեմփբելը՝ մասնավորապես ուշադրության արժանացնելով Նիքսոնի վարչակազմի վերաբերմունքը իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ:

ԱՄՆ-ի անվտանգության ծառայությունների դերը մերձավորարևելյան խաղաղության գործընթացում հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել Մայքլ Շերմանի կողմից:

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության վերջին շրջանի և այդ հակամարտության վրա 1991թ. Պարսից Ծոցի պատերազմի ազդեցության ուսումնասիրությանն է նվիրված Նենսի Մյուրեյի աշխատությունը: Նույն հեղինակի մեկ այլ աշխատությունում վերլուծության է ենթարկվում 1995թ. Վաշինգտոնյան / Օսլո-2 / համաձայնագիրը՝ կնքված Իսրայելի և ՊԱԿ-ի միջև:

Խաղաղության գործընթացի հանդեպ իսրայելական երկու կառավարությունների Ռաբինի և Նաթանյահուի դիրքորոշումների վերլուծությանն է նվիրված Պաղեստինյան Ազգային Խորհրդի անդամ, Մասաչուսեթսի համալսարանի պրոֆեսոր Նասեր Արուրիի աշխատությունը:

որտեղ ցույց է տրվում խաղաղության գործընթացի հանդեպ Ռաբինի և Նաթանյահուի կառավարությունների դիրքորոշումների որոշ նույնություններ:

1998թ. Ռեյ- Փլանթեյշնի համաձայնագրին և այդ համաձայնագրի կնքման գործում ԱՄՆ-ի Կենտրոնական Դեմոստրացիական Վարչության /ԿԴՎ / դերին իր աշխատությունում անրադարձել է Ռոբերտ Ֆիսկը:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածություն:

Ներկայացված է թեմայի արդիականությունն ու նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ինչպես նաև տրվում է հարցի պատմագրությունը:

Առաջին գլուխ: «ԱՄՆ-ի քաղաքականության փուլերը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ»: Սա որոշ իմաստով ներածական բնույթ ունի: Ներկայացված է հարցի պատմությունը, հակամարտության առաջացումը և ԱՄՆ-ի դիրքորոշումը վերջինիս նկատմամբ 1947-1988թթ. ընկած ժամանակահատվածում: Ելնելով վերոհիշյալ հանգամանքից՝ առաջին գլուխը բաժանվել է հինգ ենթաբաժինների:

Առաջին բաժնում՝ «Պաղեստինյան հակամարտության առաջացումը», ներկայացվում են այն պատճառներն ու պատմական հանգամանքները, որոնք նպաստեցին հակամարտության առաջացմանը: Այստեղ ներկայացված են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մերձավոր Արևելքում անգլիական գործերի հրամանատար Դենրի Մակմահոնի և Մեքքայի շերիֆ Դուսեյն ալ-Յաշինի միջև պայմանավորվածությունը և 1917թ. Բալֆորի հռչակագիրը: Կարծիք է հայտնվել, որ հակամարտության առաջացման պատճառներից մեկը նաև վերոհիշյալ հանգամանքներն են, քանզի Մակմահոն-Դուսեյն համաձայնագիրը և Բալֆորի հռչակագիրը գտնվում են միմյանց հանդեպ որոշակի հակասության մեջ: Նրանք երկու տարբեր ժողովուրդների՝ պաղեստինցի արաբներին և հրեաներին ինքնավարություն / Ազգային օջախ / կամ անկախություն էին խոստանում աշխարհագրական միևնույն տարածքում՝ Պաղեստինում: Նույն բաժնում ներկայացվում է նաև Պաղեստինը անգլիական մանդատի տիրապետության շրջանում: Այնուհետև ներկայացվում են Պաղեստինի հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովի ծրագրերը, ինչպես նաև ԱՄՆ-ի վերաբերմունքը այդ ծրագրերի հանդեպ: Հատուկ ուշադրության է արժանացել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947թ. Մայիսի 29-ի 181-րդ բանաձևը, որի համաձայն Պաղեստինը բաժանվում է հրեական և արաբական մասերի, ցույց է տրվում այդ մասերի տարածքային և բնակչության թվքանակի տարբերությունները, ինչպես նաև Իսրայելի անկախության հռչակումը:

Առաջին գլխի հաջորդ բաժինը՝ «1948-49 թթ. արաբա-խորայելական պատերազմը և ԱՄՆ-ի դիրքորոշումը իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ 1948-1956թթ.», նվիրված է արաբա-խորայելական առաջին պատերազմի պատմությանը: Այստեղ ականատեսների գրառումների և օրագրերի հիման վրա ցույց է տրված ռազմական գործողությունների ընթացքը, պաղեստինյան փախստականների առաջացման խնդիրը: Այս բաժնում ներկայացված են նաև ԱՄՆ-ի ծրագրերը՝ կապված Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական դաշինքներ ստեղծելու հետ: Այս հարցի հետ զուգահեռ տրվում են այն նպատակներն ու խնդիրները, որոնք իրենց առջև այս շրջանում դրել էին ԱՄՆ-ը: Ենթաբաժնում ներկայացված են 1956թ. իրադարձությունները՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ագրեսիան Եգիպտոսի դեմ և ԱՄՆ-ի դիրքորոշումը:

Առաջին գլխի հաջորդ բաժինը նվիրված է ԱՄՆ-ի քաղաքականությանը Պաղեստինյան հարցի նկատմամբ 1967 և 1973 թվականների արաբա-խորայելական պատերազմների ժամանակաշրջանում: Ներկայացված է ԱՄՆ-իսրայել համագործակցությունը: Այս բաժնում ուշադրության է արժանացել Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության հիմնադրումը և վերջինիս կառուցվածքն ու ծրագրային փաստաթղթերը: Անշուշտ հատուկ ուշադրության է արժանացել ռազմական գործողությունների ընթացքը: Վերլուծության է ենթարկվել ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 242-րդ բանաձևը և ցույց են տրվել այն տեսակետները, որոնք առաջացել են բանաձևի տարըմբերցումներից: Այնուհետև ներկայացվում է ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոջերսի ծրագիրը՝ կապված պաղեստինյան հակամարտության կարգավորման հետ և Նյու Յորքյան քննարկումները: Այս իրադարձությունների հետ զուգահեռ ցույց է տրված 1970թ. հորդանանյան իրադարձությունները՝ ռազմական բախումները ՊԱԿ-ի և հորդանանյան բանակի միջև և ԱՄՆ-ի միջամտությունը:

Այս բաժնում ցույց է տրված այն հնարավոր կարգավորումները, որոնք կարող էին նպաստել արաբա-խորայելական հակամարտության կարգավորմանը: Դրանք հակամարտության լուծման մասնակի, սեպարատ և համապարփակ լուծումներին էին: Ներկայացված է ԱՄՆ-ի դիրքորոշման փոփոխությունները այդ հարցի հետ կապված, ինչպես նաև այդ փոփոխությունների պատճառները, որը հանգեցրեց արաբա-խորայելական առաջին սեպարատ պայմանագրի՝ Բեմփ-Դևիդի համաձայնագրի կնքմանը Իսրայելի և Եգիպտոսի միջև 1978թ.:

Այս հարցին է նվիրված աշխատության առաջին գլխի չորրորդ բաժինը: Ներկայացված են 1975թ. Սինայի, Բեմփ-Դևիդի և 1979թ. Վաշինգտոնյան համաձայնագրերը: Ենթադրություն է արվել, որ եթե հնարավոր է արաբա-խորայելական հակամարտության կարգավորում, ապա դա հնարավոր է միայն փուլային ճանապարհով:

Բեմփ-Դևիդի համաձայնագիրը դժգոհությամբ ընդունվեց արաբական աշխարհի կողմից: Դեռ Եգիպտոսի իրադարձություններին, 1982թ. լիբանանյան ճգնաժամին և այդ

ժամանակահատվածում արաբա-խորայելական հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությանն է նվիրված առաջին գլխի վերջին բաժինը: Ներկայացված են ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Բրաունի ռազմական դոկտրինան և նախագահ Քարտերի դոկտրինան՝ ընդունված 1979թ. որը նոր շեշտադրումներ էր մտցնում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ: Ցույց է տրվում ԱՄՆ-ի ռազմական ներկայության հաստատման սկիզբը Մերձավոր Արևելքում և «Ռանդ» ընկերության կողմից պատրաստված ծրագիրը տարածաշրջանում ամերիկյան զորքերի տեղակայման վերաբերյալ: Ներկայացվում է Ռեյգանի վարչակազմի վերաբերմունքը պաղեստինյան խնդրի հանդեպ և 1981թ. ամերիկա-խորայելական ստրատեգիական համաձայնագիրը:

Հատուկ ուշադրության է արժանացել 1982թ. իսրայելական ներխուժումը Լիբանան՝ իրադարձություն, որը ավելի բարդացրեց պաղեստինյան հակամարտության լուծումը: Այս ժամանակաշրջանի համար արաբա-խորայելական հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի դիրքորոշման լավագույն օրինակներ են հանդիսանում Հաբիբի առաքելությունը և Ռեյգանի ծրագիրը:

Այս գլխում օգտագործված նյութերի և փաստաթղթերի հիման վրա ենթադրություն է արվել այն մասին, որ ԱՄՆ-ի քաղաքականությունը պաղեստինյան խնդրի հանդեպ 1948-1988 թթ. ընթացքում միանշանակ չի եղել և ընթացել է հարցի լուծման երկու ուղիների՝ համապարփակ կարգավորման և մասնակի լուծումների միջև, բայց միաժամանակ դրան զուգահեռ ենթադրություն է արվել, որ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ միանշանակ է եղել ցանկացած գնով իր ազդեցությունը մերձավորարևելյան տարածաշրջանում հաստատելու ձգտումը:

Երկրորդ գլուխ՝ «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ամերիկյան քաղաքականության նոր փուլը (1988-1995 թվականներ)»:

Ռեյգանի երկու բաժին, որոնցից առաջինը կրում է «1993թ. Օսլոյի համաձայնագիրը» վերնագիրը, իսկ երկրորդը՝ «Ամերիկյան դիվանագիտությունը և արաբա-խորայելական նոր համաձայնագրերը» վերնագիրը:

Այս գլխի առաջին բաժնում ներկայացվում են աշխարհաքաղաքական իրադրության փոփոխությունը 1980-ական թվականների վերջին և 1990-ական թվականների սկզբին, ինչպես նաև դրանցից բխող այն նոր պատճառներն ու հանգամանքները, որոնք ստիպեցին ԱՄՆ-ին որոշակիորեն վերանայել իր քաղաքականությունը պաղեստինյան խնդրի հանդեպ և ցուցաբերել նոր մոտեցումներ: Ցույց է տրվում այն ազդեցությունը, որ ունեցավ ԽՍՀՄ-ի փլուզումը և Սառը պատերազմի ավարտը մերձավորարևելյան գործընթացների վրա: Ենթադրություն է արվում, որ համաաշխարհային գերտերություններից մեկի հեռանալը քաղաքական ասպարեզից որոշակիորեն արագացրեց արաբա-խորայելական երկխոսությունը, իսկ 1991թ. Պարսից Ծոցի պատերազմում տարածաշրջանի ամենահզոր երկրներից մեկի՝ Իրաքի պարտությունը արաբական երկրներին և ՊԱԿ-ին ստիպեց հաշվի

նստել այն հանգամանքի հետ, որ պետք է կարգավորել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, առանց որի խաղաղության գործընթացը տեղատվություն կապեր:

Այս բաժնում աղբյուրների և փաստական տվյալների հիման վրա ներկայացված են Եվրոխորհրդի 1989թ. Մադրիդի, 1990թ. Գուբլինի հռչակագրերը, մերձավորարևելյան խաղաղության կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ: Հատուկ քննարկման է արժանացել «Պաղեստինի անկախության հռչակագիրը» ընդունված 1988թ. նոյեմբերի 15-ին Ալժիրում: Փաստաթղթում, ի թիվս այլ հարցերի, ներկայացված է նաև սպազա պաղեստինյան պետության կառավարման կարգը: Այնուհետև ցույց են տրվում այն կապերը, որոնք գոյություն ունեին պաղեստինյան խնդրի լուծման և Պարսից Ծոցի ճգնաժամի կարգավորման ուղիների միջև: Ծոցի ճգնաժամից հետո ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ հիմնական նպատակներից մեկը համարվում էր խաղաղության գործընթացում լուրջ արդյունքների հասնելը: Այդ նպատակով ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ 1991թ. հոկտեմբերին Մադրիդում սկսվեց խաղաղության գործընթացին նվիրված կոնֆերանս: Ցույց է տրվում Մադրիդի գործընթացի կարևորությունը, որտեղ առաջին անգամ կողմերը, այդ թվում նաև ՊԱԿ-ը, նստեցին բանակցությունների սեղանի շուրջ, համաձայնվեցին շարունակել բանակցությունները, որի արդյունքում 1993թ. սեպտեմբերին Օսլոյում կնքվեց իսրայելա-պաղեստինյան առաջին համաձայնագիրը, որով փաստորեն դրվեց Պաղեստինի ինքնավարության հիմքը: Ատենախոսության մեջ հանգամանորեն վերլուծվել է այդ համաձայնագիրը և կարևորվել դրա նշանակությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հետագա կարգավորման գործում: Օսլոյի համաձայնագիրը նոր հեռանկարներ բացեց իսրայելա-պաղեստինյան հետագա համագործակցության և խորացման համար:

Նշվում է նաև այն դերը, որ խաղացել է ԱՄՆ-ը համաձայնագրի նախապատրաստման և կնքման գործում: Օսլոյի համաձայնագիրը սահմանեց հինգամյա ժամանակավոր փուլ, որին հաջորդելու էր պաղեստինյան անկախ պետության հռչակումը: Հնարավորություն տվեց կնքելու արաբա-իսրայելական նոր համաձայնագրեր, որոնց նվիրված է երկրորդ գլխի երկրորդ բաժինը:

Այս բաժնում քննարկվել են Իսրայելի և ՊԱԿ-ի միջև 1994թ. ապրիլի 29-ին Փարիզում կնքված տնտեսական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիրը, որի առանցքը հանդիսացավ Մերձավոր Արևելքում չափազանց մեծ կարևորություն ունեցող ջրային ռեսուրսների /արևմտյան ափ և Ղազա/ օգտագործման հարցը: Եներգետիկայի բնագավառում համագործակցությունը ապահովելու էր գազի և նավթի արդյունահանումը Ղազայում և Նեգեվում և դրանց երկուստեք շահագործումը: Համաձայնագիրը նախատեսում էր նաև ազատ առևտրական գոտիների ստեղծում ամերիկյան դիմանագիտության ակտիվ միջամտությամբ: Զննարկվում է 1994թ. մայիսին կնքված «Ղազա-Երիբովի ինքնավարության

մասին» համաձայնագիրը, 1994թ. հուլիսին Իսրայելի և Հորդանանի միջև, իսկ օգոստոսին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքված խաղաղության պայմանագրերը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել խաղաղության գործընթացին սպառնացող հանգամանքների ու իրադարձությունների ուսումնասիրությունը: Դրանք իսլամ ահաբեկիչների իրականացրած ահաբեկչական

գործողություններն են և Իսրայելի կառավարության կողմից հրեական բնակավայրերի շինարարությունը արևելյան Երուսաղեմում և Հորդանան գետի արևմտյան ափում: 1994-1995 թթ. եղան բացառիկ տարիներ՝ միաժամանակ և՛ արաբա-իսրայելական համաձայնագրերի կնքման քանակի առումով, և՛ ահաբեկչական գործողությունների քանակի առումով: Ահաբեկչական գործողություններին նման մանրամասն անրադարձը բացատրվում է նրանով, որ այդ գործողությունները, ինչպես նաև հրեական նոր բնակավայրերի շինարարությունը, անմիջականորեն կապված են խաղաղության գործընթացի հետ և շատ հաճախ եթե ոչ հիմնականում, հանդիսացել են խաղաղության գործընթացի տեղատվության կամ սառեցման պատճառ:

Աշխատության երկրորդ գլուխը ավատվում է 1995թ. սեպտեմբերի 28-ի Վաշինգտոնյան համաձայնագրով, որը կոչվում է նաև «Օսլո-2» համաձայնագիր: Համաձայնագրի վերլուծությունը թույլ է տվել ենթադրություն անել, որ կնքված իսրայելա-պաղեստինյան համաձայնագրերից պաղեստինցիներին իրական ինքնավարություն տրամադրելու հարցում Օսլո 2-րդ համաձայնագիրը առավել կարևորություն է ներկայացնում: Միաժամանակ համաձայնագրի վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ համաձայնագիրը առավել չափով պաշտպանում է կողմերից մեկի՝ տվյալ դեպքում Իսրայելի, շահերը: Օսլո 2-րդ համաձայնագրի կարևորությունը մյուս կնքված համաձայնագրերի համեմատությամբ, մեր կարծիքով կայանում է նաև նրանում, որ այս համաձայնագիրը վերջնականապես որոշում է պաղեստինյան հորիզոնի թվակազմը, հորիզոնի գործունեության շրջանակները և բնույթը, պաղեստինյան ոստիկանության թվակազմը, ստեղծման կարգը և վերջապես ավելացվում է պաղեստինցիներին հանձնվելիք տարածքները:

Այս գլխում օգտագործված աղբյուրների և փաստաթղթերի հիման վրա եզրակացություն է արվել այն մասին, որ հակամարտող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու հարցում ԱՄՆ-ի դերը առավելագույն է եղել և Մադրիդի գործընթացից հետո դառնալով միակ վերահսկող ուժը Մերձավոր Արևելքում՝ ԱՄՆ-ը սկսում է օգտագործել ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական բնույթի լծակներ՝ հակամարտությունը որքան հնարավոր է շուտ լուծելու համար: Պենտագոնը չէր խուսափում բացեփրաց հայտարարելուց, որ. «ԱՄՆ-ը պետք է Մերձավոր Արևելքում մնա վերահսկող ուժ և պահպանի օդային ու ծովային ուղիների անվտանգությունը Մերձավոր Արևելքում»:

Երրորդ գլուխ: «Ուխտ-Փլանթեյնի համաձայնագիրը և պաղեստինյան հարցի լուծման հեռանկարները»:

Պաղեստինյան հակամարտության նկատմամբ, սույն գլխում քննարկված է, ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը 1996-1998 թթ. ընթացքում: Երրորդ գլուխը բաղկացած է երկու բաժիններից: Առաջին բաժինը նվիրված է մերձավորարևելյան խաղաղության գործընթացին 1996-1997 թթ. ընկած ժամանակահատվածում: Ցույց է տրվում այս ժամանակահատվածի առանձնահատկությունները: Այս փուլին բնորոշ են երկու կարևոր հանգամանքներ: Առաջին անգամ պաղեստինյան ներկայացուցչությունը հանդես է գալիս ոչ թե այս կամ այն պետության պատվիրակության կազմում, այլ հանդես է գալիս գրեթե պետական մակարդակով՝ ի դեմս Պաղեստինյան Ազգային օրենսդիր և գործադիր խորհուրդների: Պաղեստինցի արաբ ժողովուրդը իր պատմության մեջ առաջին անգամ ընտրությունների միջոցով ձևավորեց իր ինքնավարության մարմինները՝ ի դեմս Պաղեստինյան Օրենսդիր և Գործադիր խորհուրդների: Սակայն այդ իրադարձություններին զուգահեռ սաստկացան Իսրայելի դեմ կիրառվող ահաբեկչական գործողությունները՝ 1996թ. ապրիլին վերաճելով բացահայտ ռազմական գործողությունների իսրայելական բանակի և Լիբանանում գործող Զբոլլաի կազմակերպության միջև, որի հիմնական նպատակներից մեկը համարվում է Լիբանանի ազատագրումը: Մերձավոր Արևելքը կանգնեց նոր պատերազմի վտանգի առջև: ԵՎ միայն ԱՄՆ-ի ակտիվ միջամտության շնորհիվ ճգնաժամը հաղթահարվեց: Սիրիայի և Իսրայելի, ինչպես նաև Լիբանանի և Իսրայելի միջև 1996թ. ապրիլի 26-ին կնքվեց կրակի դադարեցման մասին համաձայնագիր և ԱՄՆ-ի պետքարտուղար Քրիստոֆերի միջնորդության շնորհիվ Իսրայելը համաձայնեց վերսկսել բանակցությունները ՊԱԿ-ի և Սիրիայի հետ, իսկ ԱՄՆ-ը օգտվելով լիբանանյան իրադարձություններից Զորդանանի հետ համաձայնություն ձեռք բերեց վերջինիս տարածքում 1000 հոգանոց օդային դեսանտի տեղակայման մասին, ինչպես նաև նոր պաշտպանական պակտ կնքեց Իսրայելի հետ:

Մյուս հանգամանքը Իսրայելում ներքաղաքական փոփոխությունը է և Լիկիուդի իշխանության գլուխ գալն է: Ամերիկյան դիվանագիտությունը լուրջ դժվարությունների հանդիպեց այս ժամանակահատվածում՝ կապված Իսրայելում ներքաղաքական փոփոխությունների հետ, որոնց արդյունքում Իսրայելում իշխանության եկավ Լիկիուդ ըլովը Բենիամին Նաթանյահուի գլխավորությամբ, որը ՊԱԿ-ի և խաղաղության գործընթացի հանդեպ գրավեց չափազանց կոշտ դիրքորոշում: Յոթ ամսից ավել խաղաղության գործընթացը տեղատվություն ապրեց: Ամերիկյան դիվանագիտությանը հարկ եղավ կենտրոնացնել իր ջանքերը այս ուղղությամբ և աննախադեպ ճնշում գործադրել Իսրայելի վրա, որից հետո միայն Նաթանյահուն համաձայնություն հայտնեց վերսկսել բանակցությունները ՊԱԿ-ի հետ: 1997թ. հունվարին ստորագրվեց Զեբրոնի համաձայնագիրը, որով քաղաքը հանձնվեց պաղեստինյան ինքնավարությանը: Վերլուծության է ենթարկվել համաձայնագրի տեքստը և ենթադրություններ են արվել վերջինիս նշանակության մասին: Համաձայնագրի կնքումից մեկ ամիս անց խաղաղության գործընթացը նորից մտավ փակուղի՝ կապված արևելյան Երուսաղեմում հրեական նոր

բնակավայրերի շինարարության և Իսրայելի դեմ նոր ահաբեկչական ակտերի կիրառման հետ: Խաղաղության գործընթացում դադարը տևեց 18 ամսից ավելի:

Երրորդ գլխի հաջորդ բաժինը նվիրված է ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի Ուայ-Փլանթեյշն բնակավայրում ընթացած բանակցություններին և այդ բանակցությունների կազմակերպման գործում ԱՄՆ-ի դերին: 1998թ. ընթացքում ամերիկյան դիվանագիտությունը պետքարտուղար Մադլեն Օլբրայթի գլխավորությամբ փորձեր կատարեց կողմերին նորից նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Էլինթոնի և ամերիկյան դիվանագետների պարբերաբար կրկնվող ճնշումները կողմերի վրա ստիպեց Իսրայելին և ՊԱԿ-ին վերսկսել բանակցությունները: Այդ բանակցությունները ի վերջո հանգեցրին Ուայ-Փլանթեյշնի համաձայնագրի կնքմանը: Ներկայացվում են մերիլենդյան բանակցությունների ընթացքը և արդյունքում կնքված համաձայնագիրը: Վերլուծության է ենթարկվել համաձայնագրի տեքստը և համապատասխան եզրակացություններ է արվել այդ համաձայնագրի նշանակության ու դերի մասին: Համաձայնագրով պաղեստինյան իշխանությունների լրիվ կամ մասնակի վերահսկողության տակ է անցնում Զորդանան գետի արևմտյան ափի 40 տոկոսը: Ցույց է տրված համաձայնագրի առանձնահատուկ բնույթը միջազգային դիվանագիտության պատմության մեջ ընդհանրապես: Պայմանագրի տեքստի մեջ բազմիցս շեշտվում է միջնորդ հանդիսացող կողմի՝ ԱՄՆ-ի անունը, որին ևս որոշակի պատասխանատվություններ է վերագրված: Այդ առումով պայմանագիրը կարելի է համարել իսրայելա-պաղեստինա-ամերիկյան: Այնուհետև ներկայացվում է ԱՄՆ-ի և Իսրայելի միջև կնքված ստրատեգիական համաձայնագիրը՝ Իսրայելին այլ երկրների բախտիկ հրթիռներից պաշտպանելու վերաբերյալ: Այս գլխում օգտագործված աղբյուրների և փաստաթղթերի վերլուծության հիման վրա ենթադրություններ են արվել իսրայելա-պաղեստինյան հակամարտության վերջնական լուծման հեռանկարների շուրջ: Եզրակացություններ են արվել Ուայ-Փլանթեյշնի համաձայնագրի կարևորության մասին:

Առաջին, նա կանխեց խաղաղության գործընթացի լրիվ դադարեցումը:

Երկրորդ, ՊԱԿ-ի կանոնադրությունից հանվեց Իսրայելը որպես պետություն վերացնելու վերաբերյալ կետը, որը նշանակում է Իսրայելի գոնատևման իրավունքի ճանաչում ՊԱԿ-ի կողմից և նոր քաղաքական-իրավական պայմանների ստեղծում արաբա-իսրայելական համագոյակցության համար: Պատահական չէ, որ Նաթանյահուն համաձայնագիրը Իսրայելի համար դիտում էր որպես «խաղաղության ապահովություն»:

Երրորդ, համաձայնագիրը կարող է ուղի հարթել խաղաղության պայմանագրի կնքման Սիրիայի, Լիբանանի և Իսրայելի միջև:

Չորրորդ, ՊԱԿ-ը թեև զգալիորեն նահանջեց Օսլոյի համաձայնագրից, բայց այդուհանդերձ պաղեստինյան կողմը շահում էր այն առումով, որ նրա հսկողության տակ են

անցնում նոր տերիտորիաներ, որը ավելի է մեծացնում պաղեստինյան պետության ստեղծման հավանականությունը

Եզրափակում: Կատարված ուսումնասիրության հիման վրա եզրակացություններ են արվել իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության մասին և ցույց է տրվել այն նշանակությունը, որ կարող է ունենալ այդ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում այսօր ընթացող գործընթացների համար: Մասնավորապես նշվում է ներկայումս իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ հստակորեն նկատվող երեք մոտեցումներ:

Առաջին, նպաստել հակամարտության վերջնական կարգավորմանը, կիրառել այնպիսի քաղաքականություն, որի արդյունքում Իսրայելի և Պաղեստինյան ինքնավարության միջև կնքվի խաղաղության վերջնական համաձայնագիր: Այս նպատակի իրականացման համար ԱՄՆ-ը գործադրում են բոլոր հնարավոր միջոցները: Այդ նպատակին պետք է ծառայեր նաև Զլինթոնի ջանքերով ստորագրված Շարմ էլ-շեյխի հուշագիրը Իսրայելի և ՊԱԿ-ի միջև 1999թ. սեպտեմբերի 4-ին: Իզուր չէ, որ ԱՄՆ-ի պահանջով առաջնորդող հողվածը դարձավ այն, համաձայն որի Իսրայելը և ՊԱԿ-ը պարտավորվում էին մշտական ներկայացուցիչների միջոցով վարել մշտական բանակցություններ, որոնք պետք է սկսվեին 1999թ. սեպտեմբերի 13-ից և չպետք է դադարեցվեին մինչև վերջնական պայմանագրի կնքումը: Դա հնարավորություն ընձեռնեց ԱՄՆ-ի նախագահ Բիլլ Զլինթոնին, 2000թ. հունիսի 11-14-ը, Զեմփ Դևիդուն, իսկ 2001թ. հունվարի 21-ին եզիպտական Թաբա քաղաքում հանդես գալ Իսրայելի և ՊԱԿ-ի միջև վերջնական պայմանագիր կնքելու շուրջ առաջարկություններով:

ԱՄՆ-ի նորընտիր նախահագ Զ. Բուշ կրտսերը ամենայն հավանականությամբ նախ և առաջ կծգտի հակամարտող կողմերին հեռու պահել միակողմանի որոշումների ընդունումից: Իսկ այդպիսիք կարող են լինել առանց Իսրայելի համաձայնության անկախ պաղեստինյան պետության հռչակումը պաղեստինցիների կողմից և Պաղեստինյան ինքնավարության հետ իսրայելական պետական սահմանի հաստատումը՝ Իսրայելի կողմից: Այս գործողությունները կարող են ի չիք դարձնել ձեռքբերումները և թաղել խաղաղության գործընթացը:

Երկրորդ, Վաշինգտոնը ձգտում է այս հակամարտության կարգավորումը օգտագործել որպես միջոց ամբողջ մերձավորարևելյան տարածաշրջանում լիակատար վերահսկող ուժ դառնալու համար: Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումը լուրջ խթան կարող է հանդիսանալ Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության համաձայնագրի կնքման համար: Այս դեպքում մերձավորարևելյան խնդիրների շարքից կվերանա ամենածանրը արաբա-իսրայելական հակամարտությունը ամբողջովին: Դա ԱՄՆ-ին հնարավորություն կընձեռնի զգալիորեն չեզոքացնել Իրանի և Իրաքի ազդեցությունը տարածաշրջանում:

Երրորդ, իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումով ԱՄՆ-ը ձգտում է ապահովել Իսրայելի ռազմական գերազանցությունը արաբական մյուս երկրների նկատմամբ: Եզրակացություն արվել, որ ԱՄՆ-ի կողմից հավասարակշռված

քաղաքականություն վարելու և հակամարտող կողմերի վրա քաղաքական ճնշումը չթուլացնելու դեպքում հնարավոր է հասնել իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման շուրջ վերջնական համաձայնագրի կնքման:

Ատենախոսության թեայով հեղինակի հրատարակած աշխատությունների ցանկ:

1. Օսլո 2-րդ համաձայնագիրը որպես Պաղեստինյան հակամարտության կարգավորման հերթական քայլ, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, հ.19, Երևան 2000, էջ 96-103:
2. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վրա ազդող որոշգործոնների մասին, ԵՊԴ-ի 80-ամյակին նվիրված Շիրակի մարզի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2000թ, էջ 132-136:
3. Ուայ Փլանթեյշնի համաձայնագիրը որպես իսրայելա-պաղեստինյան հարաբերությունների զարգացման նոր փուլ, Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1999, էջ 17-18 :
4. 1995թ. Վաշինգտոնյան համաձայնագիրը իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման վերաբերյալ, Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2000, էջ 21-22:

ОГАННЕСЯН АРТАК ГАМЛЕТОВИЧ

Политика США в отношении израильско-палестинского конфликта (1990-е гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00.02. "Всеобщая история"

Защита состоится 3 мая, 2001г. по адресу: 375019, г. Ереван, просп. Маршала Баграмяна, 24г, в Институте востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Древние историки называли Палестину перекрестком мира, таковым, является не только Палестина, но и весь Ближний Восток, который благодаря своему географическому положению является объектом внимания свердержав, которые стремятся к расширению сфер своего влияния в этом регионом. На этом фоне развивается противостояние двух народов: арабов и евреев, проживающих в Палестине. После окончания арабо-израильской войны в 1948-49 гг. и депортации арабского населения противостояние усугубилось, а после арабо-израильских войн в (1967,1973 гг) выросло в региональное противостояние, привлекая к себе внимание сверхдержав, которые связывают пути урегулирования конфликта со своими

тактическими и стратегическими интересами на Ближнем Востоке. Интерес к проблеме объясняется тем, что конфликт является ключевым в политической атмосфере региона, имеющего важное стратегическое значение, и представляет серьезную опасность для региональной безопасности и мира.

Возникновение и развитие израильско-палестинского конфликта во многом определяет сущность ближневосточной политики США. На протяжении последних пятидесяти лет американские политические деятели Ближний Восток называют "регионом жизненно важных интересов" США. Заинтересованность США прежде всего объясняется нефтяными богатствами и географическим положением Ближнего Востока.

До 1990-х гг. для ближневосточной политики США важное значение имели следующие факторы:

1. противостояние с СССР и "холодная война";
2. арабо-израильский конфликт.

В отношении последнего вплоть до Дж. Буша /1988-1992 гг./ США занимали чисто произраильскую позицию. Начиная с 1990г., фактический развал СССР и сбалансированный подход в отношении арабо-израильского конфликта, выдвигают качественно новые вопросы, в силу своей актуальности нуждающиеся во всестороннем исследовании. В частности, на Ближнем Востоке сегодня ставятся вопросы о создании Палестинского государства, о будущем Иерусалима и возвращении палестинских беженцев. Вышеперечисленные вопросы касаются соглашений, достигнутых в Осло 1993г, в Вашингтоне 1995г, в Уай-Плантейшн(США) в 1998г. Изучение этих соглашений является одной из важных целей данной диссертации. Начиная с 1990-х гг., США является единственным государством, пытающимся урегулировать израильско-палестинский конфликт.

Актуальность темы связана с такими основными тенденциями ближневосточной политики США, как:

1. урегулирование израильско-палестинского конфликта;
2. подписание мирного договора между Сирией, в дальнейшем, также между с одной стороны Ливаном и Израилем с другой;
3. обеспечение безопасности Израиля;
4. обеспечение американских экономических интересов в зоне Персидского залива;
5. установление более тесных взаимоотношений с арабскими государствами;
6. повышение военного присутствия США в регионе, как средства обеспечения безопасности региона от угрозы исходящей от Ирака и Ирана;
7. нейтрализация влияния Ирана в регионе.

Основными целями диссертации являются: анализ политики США в отношении израильско-палестинского конфликта в 1990-е годы; раскрытие новых тенденций в американской политике, а также рассмотрение ее динамики и эволюции. Особое внимание уделено показу той важной роли, которую играют США в разрешении конфликта.

Научная новизна работы состоит в том, что в ней впервые исследуются проблемы, касающиеся создания Палестинской автономии и палестинского государства, Палестинского Национального и Исполнительного Советов, а также ряда израильско-палестинских соглашений 1990-х гг. Все эти вопросы тесно взаимосвязаны с ближневосточной политикой США.

Материалы работы могут быть использованы при чтении курса "Новейшая история Ближнего Востока", а также государственными органами при подготовке аналитических материалов.

Основные положения работы изложены в опубликованных научных статьях и тезисах, апробация проведена в отделе Арабских стран института Востоковедения ИАН РАН и на кафедре истории Гюмрийского Педагогического института.

В работе в качестве источников использованы материалы и фонды документов Генеральной Ассамблеи ООН, Конгресса США, Госдепартамента США, Королевского Института Стратегических Исследований Лондона, Института Палестины Беирута, а также документы из фондов Военно-воздушных сил США. Использование некоторых этих материалов и документов стало возможным благодаря всемирной информационной сети Интернет.

Израильско-палестинский конфликт занимает особое место как в армянской, так и в зарубежной историографии, поэтому использованная нами литература разделена на три части: армянская, русская и зарубежная.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении раскрываются значение и актуальность темы, определяется цель работы и дается историографический обзор литературы по теме.

В первой главе диссертации "Этапы политики США в отношении израильско-палестинского конфликта в 1948-1988 гг." раскрывается история вопроса. Сделаны выводы о том, что политика США в отношении урегулирования конфликта колебалась между 2 основными подходами: всеобщим и поэтапным урегулированием. При этом цель политики США оставалась неизменной: любой ценой обеспечить свое влияние на Ближнем Востоке.

Во второй главе, озаглавленной "Новый этап политики США в отношении израильско-палестинского конфликта 1990-1995гг.", раскрываются значение "Соглашения Осло" в деле урегулирования палестинской проблемы и роль США в подписании этого соглашения. Показаны также те факторы, которые способствуют или мешают мирному процессу на Ближнем Востоке и методы, которые используют США в своей политике.

В третьей главе "Соглашение Уай-Плантейшн и перспективы урегулирования Палестинского вопроса" показаны важное значение соглашения Уай-Плантейшн и его особенности, сделаны выводы, о том, что подписание соглашения предотвратило коллапс мирного процесса и создало условия для дальнейших переговоров. Под юрисдикцию ООП перешло 40 процентов западного берега реки Иордан.

На основании проведенного исследования в заключении диссертации сделаны выводы по основным рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки и всемирной политики.

ARTAK H. HOVHANNISYAN

USA POLICY TOWARDS THE ISRAELI-PALESTINIAN CONFLICT. (THE 1990s).

